



**Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 01/04/2020 - 30/06/2020թթ. տվյալների ամփոփում**

Հաշտարարի գրասենյակը 01/04/2020 - 30/06/2020թթ. ընթացքում ստացել է ընդհանուր քանակությամբ 3,337 բողոք, որից՝ ֆինանսական կազմակերպություններին վերաբերող բողոքները 3,194-ն են:

Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 3,194 բողոքներից 374-ը համաձայն «Ֆինանսական համակարգի Հաշտարարի» մասին ՀՀ օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վճիռ, դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից քննվում է հաճախորդի և Կազմակերպության միջև նույն պահանջի առարկայի վերաբերյալ գործ, պահանջը չի ներկայացվել Օրենքով սահմանված ժամկետներում, Կազմակերպության լիցենզիայի գործողությունը դադարեցվել է և այլն):

Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասի դեպքում հաճախորդները նախապես դիմած չեն եղել ֆինանսական կազմակերպություններին. նման դեպքերում Գրասենյակի աշխատակիցները հաճախորդներին օգնել են գրել բողոք-պահանջներ: Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասն էլ բավարարվում են կազմակերպությունների կողմից՝ բողոք-պահանջների հիման վրա՝ առանց Գրասենյակ պահանջ-դիմում մուտք անելու. լինում են նաև բողոքներ, որոնց նախնական ուսումնասիրությունից հետո Հաճախորդին խորհուրդ է տրվում պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում է Հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման փաստը:

01/04/2020 - 30/06/2020թթ. Հաշտարարի Գրասենյակը քննության է ընդունել 1,741 պահանջ-դիմում:

<b>Գրասենյակ ներկայացրած բողոքների քանակ (հատ), որից՝</b>	<b>3,337</b>
<b>Վերաբերում են ֆինանսական համակարգին՝</b>	<b>3,194</b>
1. Ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից	374
2. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից	2,820
2.1 Ընդունվել են քննության, ուղղված են՝	1,741
2.1. 1. Բանկերի դեմ, կապված են՝	1,024
• Վարկային գործարքների հետ	629

• Ավանդային գործարքների հետ	380
• Վճարահաշվարկային գործարքների հետ	15
<b>2.1. 2. Ապահովագրական ընկերությունների դեմ, կապված են՝</b>	<b>576</b>
• Մեքենայի ԿԱՄԿՈ ապահովագրության հետ	19
• Առողջության ապահովագրության հետ	9
• Աջակցության ապահովագրության հետ	1
• Դժբախտ պատահարի ապահովագրության հետ	1
• Գույքի ապահովագրության հետ	3
• Կամավոր պատասխանատվության ապահովագրության հետ	1
• ԱՊՊԱ-ի հետ	542
<b>2.1. 3. Վարկային կազմակերպությունների դեմ</b>	<b>141</b>

<b>Քննության ընդունված պահանջ-դիմումների ելքեր (հատ դեպք)՝ [1]</b>	<b>1,702</b>
Պահանջը բավարարվել է հաշտեցման միջոցով	591
Պահանջը մասնակի է բավարարվել	174
Պահանջը բավարարվել է	103
Պահանջը մերժվել է	600
Պահանջի քննությունը դադարեցվել է	187
Պահանջի քննությունը մերժվել է	47